

ԱՍՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ ԴԴ ազգային արխիվի տնօրեն

ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՍԱՐՄԱՆԵՐԻ ԳԻՄԱՐԱՐՑԸ 1917-1923 թթ.

Ցարական Ռուսաստանում Լեռնային Ղարաբաղի տարածքը ամբողջովին գտնվում էր Ելիզավետպոլի նահանգի կազմում: Ընդ որում Գյուլիստանը՝ Ելիզավետպոլի գավառում, Զրաբերդը՝ Զիվանշիրի գավառում, Վարանդան և Խաչենը Շուշիի գավառում, իսկ Դիզակը՝ Շուշու և Կարյագինոյի գավառում:

1905-1907 թթ. ռուսական առաջին հեղափոխության տարիներին առաջ քաշվեցին տեղական ինքնակառավարման, վարչատարածքային առումով Ռուսական կայսրությունը ազգային-երնիկական սկզբունքով վերաբաժանելու, ինչպես կովկասյան երկրամասում, այնպես էլ ողջ կայսրությունում դաշնային կառուցվածք ստեղծելու ժրագրեր:

Այս քննարկումները վերսկսեցին նաև Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, երբ հայ, վրացի և թաթար գործիչները ուշադրության հրավիրեցին երկրամասի վարչատարածքային բաժանման մեջ ազգային-տարածքային գործոնի անտեսումը¹:

Սակայն այս քննարկումները թե՛ տեսական և թե՛ գործնական առումով նոր թափ ստացան 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո:

Պետք է նշել, որ ետքետրվարյան ամբողջ Ռուսաստանում ազգային հարցի լուծումը կապվում էր զենստվուների՝ տեղական ինքնակարության նարմինների ստեղծման խնդրի հետ: Հեղափոխության առաջին ամիսներին, երբ կործանվում էին միապետության դարավոր վարչական իիմքերը և ազատությունը կայունացնելու նպատակով ստեղծվում էին նոր, ժամանակավոր մարմիններ, զենստվուներով գբաղվելը դիտվում էր վաղաժամ:

¹ Մարտամասն տես, Վ. Մելիքյան, Փետրվարյան հեղափոխություններ և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր), Եր., 1997, էջ 115-117, Ա. Մելքոնյան, Զավախչը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Եր., 2003, էջ 265-267:

Այսուհանդերձ, 1917 թ. ամռան սկզբին այդ հարցը նորից ակտիվացավ: Անդրկովկասում գեմստվոներ մտցնելու նպատակով ՕԶԱԿՈՍ-ի կողմից հրավիրվեց խորհրդակցություն: Անմիջապես հարց բարձրացվեց նաև վարչական վերաբաժանման մասին, որը վերաբերում էր ոչ միայն Ելիզավետպոլի ու Երևանի, այլև Թիֆլիսի նահանգներին ու Կարսի մարզին:

Միաժամանակ Պետրոգրադում ընթանում էր կենտրոնական խորհրդակցություն՝ նվիրված Սահմանադիր ժողովին ընտրությունների դրույթների մշակումը: Սասմակցում էին Անդրկովկասի ժողովուրդների 2-ական ներկայացուցիչներ: Այս խորհրդակցությանը զուգահեռ, Ռուսաստանի ներքին գործերի նախարարությունը ևս հրավիրել էր խորհրդակցություն՝ ցարական վարչակարգի օրոք գենստվոններից զրկված ազգային շրջաններում այդ ինստիտուտի ստեղծման վերաբերյալ: Քննարկվում էին Սիբիրի, Արխանգելսկի, Թուրքմենստանի, Մերձբալթյան նահանգների, կազակային շրջանների գենստվոնների խնդիրները: Ի դեպ, որոշ նահանգների վերաբաժանումը այստեղ լուծում գտավ: Ժամանակավոր կառավարության որոշումներով ստեղծվեցին նոր նահանգներ ու գավառներ, որոնցից էին, օրինակ, Լիֆլյանդիան ու Էստլանդիան, լատիշների ու Էստերի նորաստեղծ նահանգները¹: Զենստվոյական խորհրդակցությունը օգտվելով այն բանից, որ Սահմանադիր ժողովի ընտրությունների Անդրկովկասի ներկայացուցիչները գտնվում էին Պետրոգրադում, նրանց հրավիրեց մասնակցելու գենստվոյական համաժողովի աշխատանքներին: Այնտեղ քննարկվեցին Անդրկովկասում գենստվոններ հիմնելու և երկրամասի վարչական վերաբաժանման նպատակահարմարության խնդիրները: Դավաքին մասնակցում էին երկրամասի գրեթե բոլոր ազգերի (յուրաքանչյուրից 7 հոգի) և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները: Առաջարկվում էր հիմնականում հարցի լուծման երեք ուղի: 1. Իրականացնել Անդրկովկասի Եթնիկական-սահմանային նոր վերածում, կամ եզակի հիմքի վրա Անդրկովկաս ներմուծել գենստվոններ: 2. Զքննարկել այդ խնդիրը և այն հանձնել ՕԶԱԿՈՍ-ին, որն էլ համապատասխան միջոցով կիրականացնի երկրամասի վարչական վերաբաժանումը և 3. Օգտվելով Պետրոգրադում Անդրկովկասի պատվիրակների ներկայությունից,

¹Տե՛ս Ա. Ծախաթունյան, նույն տեղում, էջ 120:

մշակել նախագիծ և այն ուղարկել ՕԶԱԿՈՍ-ի և Կովկասի դեմոկրատիան ներկայացնող կազմակերպությունների վերջնական եզրահանգմանը: Մեծամասնության կողմից հավանության արժանացավ վերջին տարբերակը¹:

Խորհրդակցություններում հայերի շահերը ներկայացնում էին Գևորգ Խատիսյանը և Ավետիք Շախարունյանը: Նրանք ունեին Անդրկովկասի վերաբաժանման բավականին մշակված նախագիծ: Այն պատկանում էր Ավետիք Շախարունյանին, որն էլ 1918 թ. Թիֆլիսում հրապարակեց "Ադմինիստրատիվների ուղարկությունների պատճենաթուղթում": Վիճարանություններն ընթացան հենց հայկական նախագիծ շուրջ, որը մասնակի փոփոխություններով ուղարկվեց Կովկաս: Նախագծում առաջարկվում էր Լոռին անջատել Բորչալուի գավառից, ինչպես նաև Ախալքալակի շրջանը հանել Թիֆլիսի նահանգի կազմից: Ապագա Ալեքսանդրապոլի նահանգը (ապագա Դաշտանը նրանց կարծիքով ստեղծվելու էր Ալեքսանդրապոլի շուրջը) դաշնակցական երկու գործիքները պատկերացնում էին Ալեքսանդրապոլի, Ախալքալակի, Լոռու, Կարսի, Կաղզվանի գավառների միավորնան տեսքով: Այս առաջարկները նույնպես առարկություն չստացան: Խորհրդակցությունը ընդիանուր առնամբ տվեց դրական պատասխան՝ վերաբաժանման հիմքում դնելով Երմիկական սկզբունքը: Խողոհի իրագործման համար ընտրվեցին Անդրկովկասը ներկայացնող երեք հիմնական ազգերի 2-ական ներկայացուցիչներ՝ իշխան Զ. Ավալովի նախագահությամբ²: Ի վերջո բյուրոկրատիան որոշ քաշքուկներից հետո նախագիծը հանձնեց ՕԶԱԿՈՍ-ից³:

Իր հերթին ՕԶԱԿՈՍ-ը իրավիրեց խորհրդակցություն՝ Ն. Ժորդանիայի նախագահությամբ: Յուրաքանչյուր ուղղությունը ներկայացնում էին հինգ հոգի: Խորհրդակցությունը հավանություն տվեց նախկին դրույթներին: Այս անգամ էլ առարկեցին վրացական ազգային դեմոկրատները՝ Վրաստանից Բորչալուի և Ախալքալակի անջատման դեմ: Նրանք հիմնվում էին իբր թե 1783 թ. պայմանագրի վրա⁴:

¹ Տե՛ս Ա. Շախարունյան, նոյն տեղում, էջ 121

² Տե՛ս Արմանո-Հրազդական պատճենաթուղթում:

³ Տե՛ս նոյն տեղում, էջ 7-8:

⁴ Տե՛ս նոյն տեղում, էջ 9-10:

Այս ամենից պարզ երևում է, որ սահմանների լուծնան հարցն այն ժամանակ արդեն դրված էր ոչ թե վարչական, այլ առավելապես պետական-տարածքային հարթության վրա:

1917 թ. հոկտեմբերի 14-15-ին, Չխենկելու նախագահությամբ և ժորդանիայի ու Գեգեչկորու մասնակցությամբ, կայացած ՕԶԱԿՈՍ-ի մի ընդլայնված խորհրդակցությունում հայերի կողմից առաջարկված սահմանային փոփոխությունները մերժվեցին՝ իհմք ընդունելով հայերի ու մոլուզմանների անհանդուրժողականությունը: Ա. Շախարումյանի արտահայտությամբ. Վերաբաժանման հարցում «հայկական», «կուսակցական» և «միակողմանի» նախագծի դեմ դարձյալ սկսվեց վրացանուալմանական կամպանիան, այս անգամ որպես վարչական վերաբաժանման դեմ արհեստականորեն ստեղծված երկարաժամկետ գենք:

Անդրկովկասի սահմանափոխության հարցերը քննարկեցին նաև Հայոց ազգային համախորհրդակցության (27 սեպտեմբերի-13 հոկտեմբերի) հոկտեմբերի 6-ի նիստում:

Հարցի քննարկումը նախապատրաստել էր անկուսակցական պատգամավոր Ստ. Կամսարականը, որը Միք. Պապաջանյանի խորհրդով երկար ժամանակ ուսումնասիրել էր այդ խնդիրը Գևորգ Խատիսյանի հետ:

Հանդես գալով գեկուցումով և անդրադառնալով տվյալ ժամանակաշրջանում Անդրկովկասի նահանգների և գավառների սահմաններին, Կամսարականը նշեց, որ սահմանաբաժանմումը կատարելիս ցարական կառավարությունը աչքի առաջ չի ունեցել ոչ միայն էթնիկական, այլև տեղագրական ու տնտեսական պայմանները, նույնիսկ վարչական կառավարման արդյունավետության խնդիրը: Իշխանություններին, այդ թվում Կովկասյան փոխարքայություններին, ծեռնտու է եղել, որ բազմազգ երկրամասի այս կամ այն նահանգում կամ գավառում արճատական բնակչությունը մյուս ազգությունների նկատմամբ բացարձակ մեծամասնություն չկազմի: Դա մասնավորապես վերաբերել է հայաբնակ գավառներին: Որպեսզի հայերը այս կամ այն վարչական տարածքում բացարձակ մեծամասնություն չկազմեն, շատ հաճախ տվյալ հայաբնակ գավառից անջատել են առանձին մասեր և միացրել հարևան թուրքաբնակ վարչական տարածքներին:

Ժամանակավոր կառավարությունը սահմանբաժանման ահա այսպիսի ժառանգություն էր ստացել նախորդ ռեժիմից: Նման վիճակը

խիստ դժվարացնում էր ժողովրդավարական կարգախոսներով իշխանության եկած կառավարության գործը: Բայց, չնայած դրան, այդ կառավարությունը, ի տարբերություն ցարական վարչակազմի, փորձում էր զեմստվոյական կառավարում մտցնել լեզվի, դատարանի, հոդաբաժնության, դպրոցների և այլ հարցերում, դրանով իսկ, ըստ էության, նպաստելով ազգային տարածքների համախմբմանը: Զեմստվոյական հիմնարկների ստեղծումն իր հետևից անհրաժեշտաբար և անխուսափելիորեն առաջ էր բերում սահմանափոխության խնդիրը:

Ստ. Կամսարականը համախորհրդակցությանը ներկայացրեց իր կողմից կազմված՝ Անդրկովկասի վարչական տարածքների սահմանափոխության նախագիծը: Նրանում նա նկատի չէր ունեցել քաղաքական դիտումները, այլ հիմք էր ընդունել տնտեսական և էքնիկական սկզբունքները, այն է՝ ի մի բերել ու համախմբել միևնույն ցեղի բնակության վայրերը: Դրա հետ միասին, ապագա զեմստվոյի գործունեությունը հեշտացնելու նպատակով, նա հաշվի էր առել նաև երկրամասի տարբեր տարածքների տնտեսության բնույթը:

Նախագիծի համաձայն, Անդրկովկասի հայերով խիստ բնակեցված տարածքներից կազմվում էր հայկական մի նահանգ, որի մեջ պետք է մտնեին. ամբողջ Երևանյան նահանգը, Կարսի շրջանից՝ նրա լեռնային մասը: Հայկական այս նահանգի տարածությունը լինելու էր 60 հազ. քառ. վերստ՝ 2 միլիոն բնակչությունով, որոնցից հայերը կազմելու էին 1 միլիոն 200 հազար կամ նահանգի բնակչության ընդհանուր թվի 60 տոկոսը¹:

Այսպիսով, համախորհրդակցության պատգամավորները գործ ունեին հայարնակ տարածքներում վարչական միավորներ ստեղծելու երկու տարրերակի հետ՝ կառավարության առաջարկած և ՕՉԱԿՈՒ-ի հավանությանն արժանացած տարրերակի, որը նախատեսում էր ստեղծել հայկական երեք նահանգ, և Ստ. Կամսարականի կազմած և համախորհրդակցության՝ նահանգների ու գավառների սահմանագծերի փոփոխության և զեմստվոյի հարցերի սեկցիայի հավանությանը արժանացած տարրերակի, որը նախատեսում էր նույն տարածքների վրա կազմակերպել հայկական մեկ նահանգ:

Քննարկման ընթացքում կարծիքները բաժանվեցին:

¹ «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1-2, 1992, էջ 60:

Հայ ժողովրդական կուսակցությունը, հաշվի առնելով հաղորդակցության դժվարությունները և ենթադրվելիք կենտրոնի մեջ հեռավորությունը ծայրագավառներից, կողմնակի էր երեք նահանգների տարբերակին:

Դ. Յ. Դաշնակցությունը, ընդհակառակը, հանդես եկավ մեկ նահանգ ունենալու առաջարկի օգտին:

Սոցիալ-դեմոկրատները, որոնք ընդհանրապես դեմ էին պետության նահանգային վարչական կառուցվածքին, այս անգամ էլ դեմ արտահայտվեցին հայկական առանձին նահանգ կամ նահանգներ ստեղծելու առաջարկին, ասելով, որ, նահանգային բաժանման ծգտելով, «հայերը ցանկանում են քաղաքական սահմաններ գտնել և ոչ վարչական»¹:

Սոցիալ-դեմոկրատները դրա փոխարեն առաջին գիծ մղեցին վարչական բաժանման կանտոնային սկզբունքը՝ Շվեյցարիայի օրինակով: Նրանք առաջարկում էին գոյություն ունեցող նահանգներում կատարել ներքին բաժանումներ՝ միատարր համախմբումների համար ստեղծել կանոններ և դրանով իսկ ապահովել նահանգների փոքրամասնությունների ազգային-կրթական-մշակութային կարիքները՝ նորից հենվելով գեմստվոյի վրա:

Դանդես գալով նահանգային և գավառային բաժանումների դեմ ընդհանրապես սոցիալ-դեմոկրատները գտնում էին, որ Անդրկովկասի ողջ տարածքում պետք է ստեղծել կանտոնային վարչական միավորներ՝ Թիֆլիսը դարձնելով այդ կանտոնների կենտրոնավայրը: Ըստ որում, նրանք այն կարծիքի էին, որ Թիֆլիսը չպետք է թողնել Վրաստանին, իսկ Բաքուն՝ Թուրքերին, որ այդ երկու քաղաքները ոչ թե պետք է պատկանեն այս կամ այն ազգին, այլ պետք է լինեն անկախ կանտոններ, ինքնուրույն վարչական միավորներ՝ ինտերնացիոնալ բնույթով: Իսկ դրան կարելի էր հասնել Անդրկովկասի վարչական կանտոնային բաժանման սկզբունքը միասին ընդունելու միջոցով:

Չընդունելով կանտոնների ստեղծման առաջարկը, դաշնակցական պատգամավորները (Ա. Շահսաթունի, Ն. Աղբայան, Խ. Կարծիկյան) իրենց ելույթներում տարակուսանք էին հայտնում, ասելով, որ սոցիալ-դեմոկրատները միշտ հանդես են եկել մեծ համախմբումների օգտին,

¹ Նույն տեղում, էջ 63:

բայց այժմ, չգիտես ինչու, իրապարակ են թերել այնպիսի առաջարկ, որի իրականացման դեպքում մեծապես կդժվարանան Անդրկովկասի բոլոր ժողովուրդների գործերը: Օրինակ, խաշնարածները չեն կարող սահմանափակվել մի կանտոնի ներսում, ասում էր Ավետիք Շահ-խաթունին. կամ մի՞թե կարելի է ամեն մի կանտոնում, ասենք ունենալ «կազյոննայա պալատա»:

Քանի որ բուռն վիճաբանություններն արդյունք չտվեցին և հնարավորություն չեղավ սահմանափխության մասին որոշում կայացնել, ուստի համախորհրդակցությունն անհրաժեշտ գտավ այդ հարցի մասին բանաձևի ընդունումը թողնել հետագա նիստերից մեկում, սակայն համախորհրդակցության ընթացքում այդ հարցը այլևս չքննարկվեց:

1918 թ. մայիսի վերջին Անդրկովկասյան երեք հանրապետությունների անկախացումից հետո Ղարաբաղի խնդիրը դառնում է հայ-ադրբեջանական հարաբերությունների անկյունաքարը: Բաթումի բանակցությունների ընթացքում Ադրբեջանը պահանջում էր ոչ միայն Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախշինանը, այլև նոյնիսկ Երևան քաղաքը: 1918 թ. հունիսի 13-ին Հայոց ազգային խորհուրդը դիմում է մուսուլմանական ազգային խորհրդին, որ երկու խորհուրդների համատեղ նիստում, որտեղ քննարկում էր երկու հանրապետությունների սահմանագատման հարցը, «Զեր կողմից արվեց հայտարարություն, որ Ղարաբաղի և Հայաստանի արևելյան սահմանների մասին հարցը կդառնա մուսուլմանական ազգային խորհրդի քննարկման առարկան, որից հետո կվերականգնվեն բանակցությունները նշված հարցով»: Գրության վերջում խնդրում էր հայտնել, երբ է սպասվում բանակցությունների վերակառում¹: Գրության հաջորդ օրը Ադրբեջանի մուսուլմանական ազգային խորհուրդը կտրականապես մերժում է Հայոց ազգային խորհրդի առաջարկը, և պնդում, որ Ադրբեջանի և Հայաստանի տարածքների սահմանների մասին բանակցությունների ընթացքում երբեք Ղարաբաղի հարցը չի քննարկվել, իրենք կտրականապես մերժում են այդ առաջարկը և քննարկումները կարող են ընթանալ միայն հայկական և մուսուլմանական ազգային խորհուրդների, իբրև թե արդեն ձեռք

¹ ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 17, թ. 20:

թերված բանավոր համաձայնության շրջանակներում¹:

Իսկ ինչպես էին պատկերացնում հայերը Ղարաբաղը, ինչ էր այն:

1918 թ. հուլիսի 10-ին Թիֆլիսում Ղարաբաղի հայրենակցական միության կազմած տեղեկանքի համաձայն, այն իր մեջ ներառում էր Ելիզավետպոլի, Զիվանշիրի, Շուշու, Կարյագինոյի և Զանգեզուրի գավառների Լեռնային շրջանները, որտեղ բնակվում էին 300 հազար հայեր (համաձայն «Կովկասյան կալենդարի», այսքան հայեր (299754) էին բնակվում նշված գավառներում 1916 թ. հունվարի 1-ին, բացառությամբ Ելիզավետպոլ քաղաքի (12125 հայ)²:

1919 թ. հունվարի 15-ին Աղրբեջանի կառավարությունը նշանակում է դոկտոր Սուլթանովին Ղարաբաղի գեներալ-նահանգապետ, որը իր մեջ ներառում էր Զանգեզուրի, Շուշու, Զիվանշիրի և Զերբարիլի (Կարյագինոյի) գավառները:

Դրան հակառակ, ՀՅ կառավարության հունվարի 21-ին Զանգեզուրի և Ղարաբաղի հայկական շրջանները համարելով ՀՅ անքաղաքական մաս, որոշում է կազմավորել «Զանգեզուր-Ղարաբաշյան Երկրամասային (մարզային) խորհուրդ», որը այդ տարրածաշրջանը կառավարելու էր ՀՅ գործող օրենքներով: Երկրամասի մանրանասն սահմանները ճշտված չէին:

Ղարաբաղի ազգային խորհուրդը 1919 թ. փետրվարին 4-րդ համագումարի օրերին Հայկական Ղարաբաղ է համարում Շուշու, Կարյագինոյի, Զիվանշիրի (Զրաբերդ), Ելիզավետպոլի (Գյուլիստան) գավառների Լեռնային գոտին:

Փաստորեն Զանգեզուրի գավառը առանձնացվում է Ղարաբաղից, և ինչպես նշված է Հայկական Ղարաբաղի ժամանակավոր կառավարման կանոններում, ունենալու էր հատուկ կառավարում³: Ղարաբաղի հայության 5-րդ համագումարին (23-29 ապրիլի 1919 թ.) մասնակցում էին Գյուլիստանի ներկայացուցիչները և այստեղ գեներալ Շատելվորտը համաձայնվում է Գյուլիստանը մտցնել Ղարաբաղի կազմում:

Զանգեզուրի հայոց ազգային խորհրդի բրիտանական հրամանա-

¹ ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 17, թ. 25:

² Кавказский календарь на 1917 г., Тиф., 1913, с. 190-197.

³ Нагорный Карабах, с. 80-81.

տարության համար 1919 թ. մայիսի 30-ին կազմած տեղեկագրում ևս Ղարաբաղը և Զանգեզուրը ներկայացված են որպես առանձին երկրամասեր և Ղարաբաղի կազմում ներառված են Խաչենը, Զրաբերդը, Վարանդը և Դիզակը¹:

Ղարաբաղի Դայոց 7-րդ համագումարում Ղարաբաղի Լեռնային մաս է համարվում Շուշու, Ջիվանշիրի և Ջերրախիլի գավառները (Դիզակ, Վարանդան, Խաչեն, Զրաբերդ): Զրաբերդ անվան տակ հասկացվում է նաև Գյուլիստանը 13 հայկական գյուղերով, քանզի Ջիվանշիրի գավառապետի մեկ օգնականը և մեկ պրիստավը հատուկ գրադիվելու էին Գյուլիստանի շրջանով: Եվ երբ 1919 թ. սեպտեմբերի կեսերին Գյանջայի գավառապետ Բահրամ բեկը փորձում է իրեն ենթարկել շրջանը, նույնիսկ ադրբեջանական իշխանությունները պահանջում են դադարեցնել ինքնական գործողությունները: Սակայն նոյեմբերի 1-ին Գյանջայի նահանգապետը հանձնարարում է գավառապետին իր ենթակայության տակ վերցնել շրջանի գործերի վարումը²:

1920 թ. մարտի 6-ին Ղարաբաղի հայության 8-րդ համագումարում մասնակցում էին Ղարաբաղի 5 շրջանների ներկայացուցիչները:

Ադրբեջանում Խորհրդային իշխանության հաստատումով իրադրությունը փոխվեց, Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը, օգնական ուժ ունենալով 11-րդ կարմիր բանակը, փորձում է արագ և ամեն գնով Ադրբեջանին միացնել Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը: Ստեղծվում է Ղարաբաղի նահանգային հեղկոմ, որը սկզբում ղեկավարում է նույն ինքը՝ դոկտոր Խոսրով բեկ Սուլթանովը: Մայիսի 12-ին Շուշի ժամանեց Ս. Օրջոնիկիձեն, որը ծերբակալեց Սուլթանովին: Մայիսի 26-ին Դրոն իշխանությունը հանձնեց հայ բոլշևիկներին՝ հանձինս Սաքո Դամբարձումյանին և հաջորդ օրը հեռացավ Ղարաբաղից: Մայիսի 28-ին Ղարաբաղի հայության 10-րդ համագումարը երկրամասը հռչակեց Խորհրդային և ստեղծվեց հեղկոմ Ս. Դամբարձումյանի նախագահությամբ: Միաժամանակ ստեղծվեց Դաշտային Ղարաբաղի հեղկոմ Բ. Վելիբեկովի նախագահությամբ՝ Շուշի կենտրոնով: Շունիսի 16-ին այս հեղկոմները միավորվեցին: Նախագահ դարձավ Վելիբեկովը, ապա Ասադ Կարակը: Զանգեզուրը այս նահանգում ունենալու էր գա-

¹ Նույն տեղում, էջ 226:

² Նույն տեղում, էջ 324:

³ Նույն տեղում, էջ 356-358:

վառի կարգավիճակ:

Արդեն 1920 թ. հուլիսի 10-ին Աղբբեջանի կոմկուսի կենտկոմի բյուրոն Ղարաբաղի հարցը հեշտությամբ լուծելու համար որոշում է Ղարաբաղը մասնատել, վերացնել «Ղարաբաղյան մարզային կենտրոնը», այն նորից բաժանել երեք գավառների միջև՝ ստեղծելով առանձին գավառային հեղկոմներ:

Յայաստանում Խորհրդային իշխանության հաղթանակից հետո, հեղափոխական արբեցումից հետո շարունակվեց պայքարը Լեռնային Ղարաբաղի համար արդեն Խորհրդային Յայաստանի և Աղբբեջանի միջև:

1921 թ. մարտի 1-ին Մոսկվայում Աղբբեջանի ներկայացուցիչ Բ. Շախբաղթինսկին Լենինին է ներկայացնում մի գեկուցագիր, որտեղ ներկայացնում է Անդրկովկասի վիճելի տարածքները: Ղարաբաղը նա ներկայացնում է մի ընդարձակ լեռնային մարզ, որի ցածրավայրում ապրում են մուսուլմանները, իսկ լեռնային մասում՝ հայեր: Ղարաբաղի հայ բնակչության քանակը նշում է 178 հազար, իսկ թուրքերին և քրդերին՝ 415 հազար, որտեղից են այս քվերը, անհասկանալի է: Զիվանշիրի, Շուշու և Զեբրահիլի գավառների հայ բնակչությունը 1916 թ. հունվարի 1-ին կազմում էր 142110, եթե դրան ավելացնենք Ելիզավետպոլի գավառի հայ բնակչությունը, կստացվի 198699 հազար (առանց Ելիզավետպոլ քաղաքի): Իսկ մուսուլման բնակչությունը երեք գավառներում կազմում էր 207890, Ելիզավետպոլի գավառի հետ՝ 347087 (առանց Ելիզավետպոլ քաղաքի):

Նշենք, որ Զանգեզուրը ներկայացված է որպես վիճելի այլ տարածք:

1921 թ. ընթացքում Աղբբեջանին անցած Զանգեզուրի գավառի Արևելյան հատվածից և Կարյագինոյի գավառի արևմտյան մասերից (Հադրութ) կազմավորվում է Կուրաքլուի գավառը, որը՝ համաձայն «Բակինսկի ռաբոչի» թերթի 1922 թ. մարտի 8-ի հաշտարարագրության՝ համարվում է Ղարաբաղի 4 գավառներից մեկը (Շուշի, Զիվանշիր, Կարյագինո, Ղուբարլի):

1923 թ. հուլիսի 1-ին Աղբբեջանի կոմկուսի կենտկոմի նախագահությունը ստեղծում է ղարաբաղյան հարցի հանձնաժողով, հանձնարարում յոթ օրվա ընթացքում որոշելու՝

1. Ղարաբաղի ավտոնոմիայի սահմանները,

2. Քուրդստանի կանոնադրությունը,
3. Ցածրադիր (կամ դաշտային) Ղարաբաղի վարչական բաժանումը:

Մի քանի օր անց՝ հուլիսի 7-ի և 16-ի ընթացքում հանձնաժողովը որոշում է Ձիվանշիրի, Շուշու և Կուրաթլիի գավառների այն հայկական և թուրքական գյուղերի ցանկը, որոնք մտնելու էին ԼՂ-ի կազմում:

Անհամաձայնություն է ծագում Շուշիի և Խոնաշենի հարցում, հանձնաժողովը որոշում է դրանք ընդգրկել ցածրադիր Ղարաբաղի կազմում: Արձանագրությունում արձանագրված է Ա. Ղարաբյողովի հատուկ կարծիքը, որ դրանք պետք է մնան ԼՂ-ի կազմում:

1923 թ. հուլիսի 7-ին Ադրբեջանի կենտգործկոնը դեկրետ է հրապարակում «Լեռնային Ղարաբաղի Խնքնավար մարզ» կազմավորման մասին: Ղարաբաղը բաժանվում է երեք մասի՝ Լեռնային Ղարաբաղ, Ցածրադիր Ղարաբաղ և Քուրդստան:

Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի նախագահները հուլիսի 16-ին քննարկելով դարաբաղյան հարցի հանձնաժողովի գեկուցումը, որոշում է Սկորենկակու հասարակության ռուսական գյուղերի հողերը (այսինքն Խոնաշենը) և Շուշի քաղաքը ընդգրկել ԼՂ-ի կազմում:

Ցածրադիր վայրերից ձևավորել 2 գավառ՝ Աղդամի և Զեբրահիլի: